## Հարցեր և առաջադրանքներ

1. Կազմե՛ք սահիկաշար՝ ներառելով գրողի կենսագրության, ապրած դարաշրջանի ուշագրավ փաստերը (խմբային աշխատանք):
2. Ներկայացրե՛ք Պարոնյանի  գրական կերպարը՝ ելնելով գրողի և նրա ստեղծագործության մասին նշանավոր մարդկանց ասույթներից ու կարծիքներից (խմբային աշխատանք):
3. Ովքե՞ր են Պարոնյանի կատակերգությունների իրական ու այլաբանական կերպարները, և որո՞նք են դրանց սյուժեների երգիծական հիմքերը:
4. Ինչպիսի՞ն է «Մեծապատիվ մուրացկանները» ստեղծագործության կառուցվածքը:
5. Ո՞րն է վեպի թեման և բովանդակությունը:
6. Ընդգծի՛ր գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/բանալի միտքը, մեկնաբանի՛ր:
7. Արդարացրո՛ւ, մեղադրի՛ր կամ խղճա՛ Աբիսողոմ աղային՝ ասածդ հիմնավորելով (անհատական աշխատանք):